«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս. Լպուտյան
«19» «փետրվարի» 2025թ

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչ- Հայաստանի շախմատի ֆեդերացիա

Անցկացման վայր- Հայաստանի շախմատի ակադեմիա /հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34/:

Ժամկետ- 22-30 մարտի 2025թ.

Ամսաթիվ	Խաղափուլ	Ժամ
22 մարտ	1-ին	12:00
23 մարտ	2-րդ	11:00
24 մարտ	3-րդ	11:00
25 մարտ	4-րդ	11:00
26 մարտ	5-րդ	11:00
27 մարտ	6-րդ	11:00
28 մարտ	7-րդ	11:00
29 մարտ	8-րդ	11:00
30 մարտ	9-րդ	11:00
Փակման արարողություն		17:00

Ժամակարգ- 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մասնակիցներ՝

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով
ա) մինչև 10 տարեկան աղջիկներ (2014թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
բ) մինչև 12 տարեկան աղջիկներ (2012թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
գ) մինչև 14 տարեկան աղջիկներ (2010թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
դ) մինչև 16 տարեկան աղջիկներ (2008թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական համակարգով, 9 խաղափուլով: «Դ» մրցաշարը (մինչև 16 տարեկան աղջիկներ), մասնակիցների քիչ քանակի դեպքում հնարավոր է անցկացվի նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Լրացուցիչ ցուցանիշներ՝

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն՝

1. Հատված Բուհգոլցով
2. Բուհգոլցով
3. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. Հաղթանակների առավելագույն քանակի

Հայաստանի առաջնության ուղեգրեր- Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

Աղջիկներ	Մինչև 10	Մինչև 12	Մինչև 14	Մինչև 16
Տեղեր	12	10	7	6

- Խաղի մեկնարկից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե: 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսով, «smart» ժամացույցներով, ականջակալներով և այլ տեխնիկական միջոցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:

Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների, ուղեկցող անձանց և մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը: Առաջնության բժշկի սնունդի, մրցավարների սնունդի և գիշերակացի ֆինանսավորումը կատարվում է ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:

Մարզերի և Երևանի մարզադպրոցների հայտերն ուղարկել info@chessfed.am էլ. հասցեին՝ համաձայն սահմանված ձևաչափի: Երևանյան ընտրական փուլում ուղեգրեր նվաճած մասնակիցների տվյալները ևս ներառել հայտերում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 10/99/ 440105

Մրցաշարի գլխավոր մրցավար՝
Միջազգային մրցավար Գևորգ Մուրադյան